— Բայց ես չեմ իմանում, ո՞ւր պէտք է գնամ. այն յիմարը պէտք է տանէր ինձ, — պատասխանեցի դարձեալ վրդովուած կերպով:

— Մենք գիտենք, — ասաց ծերունին հանդարտութեամբ: — Քո ընկերը պատուիրեց մեզ, որ քեզ հասցնենք Ս. — բէկի վրանները. նրա արօտամարգերը շատ հեռու չեն այստեղից:

— Ո՞վ է Ս. — բէկը:

— Եզիդիների գլխաւորն է:

Ես մի փոքր հանգստացայ, մանաւանդ, երբ մտաբերեցի, որ Մըհէն նամակ ունէր Ասլանին հասցնելու, դրա համար նա շտապում էր, նա չէր կարող իմ դանդաղ քայլերին համբերել:

Տանուտէրի խօսքերից երեւաց, որ Մըհէն չէր յայտնել նրան մեր իսկական նպատակը, թէ ինչ գործով էինք գնում եզիդիների գլխաւորի մօտ եւ ոչ Ասլանի մասին յիշել էր մի բառ: Նա հնարել էր մի խոշոր սուտ, իբր թէ մենք սուրբ տիրամօր ուխտաւորներ ենք, այստեղ գողացել էին մեր ձին, եւ լսելով, թէ ձին եզիդիների ցեղի մէջն է տարուել, այժմ գնում էինք այնտեղ ձին գտնելու: Մըհէի սուտը մասամբ ճշմարիտ էր, որովհետեւ նա իմ ձին յանձնեց մի հովոի, որ եզիդիների ցեղին էր պատկանում, եւ գուցէ այնտեղ կը գտնէինք, ուր պէտք էր մեզ գնալ:

Ծերունի տանուտէրը, իր նահապետական բնաւորութեան յարմար, միշտ աշխատում էր մի բանով հիւրասիրել ինձ, որ ես ուտէի, խմէի եւ ուրախ լինէի: Դուք, ասում էր նա, անպատուած կը լինէք իմ վրանը, եթէ դժգոհ հեռանաք այստեղից: Բայց ինչ որ աչքի էր զարկում, այն էր, որ նրա հարսները, աղջիկ թոռները, ոչ մէկը չէր թաքչում ինձանից, ոչ մէկը երեսը չէր ծածկում, որպէս սովորութիւն է Պարսկաստանի հայ կնիկների մէջ: Նրանք բոլորը խօսում էին ինձ հետ, որպէս թէ ես նրանց վաղեմի բարեկամը լինէի: Եւ նրանց խօսակցութիւնն այնքան պարզ եւ անմեղ էր, որ չէր կարելի չհամակրել նրանց:

— Դու քոյր ունե՞ս, — հարցնում էր մի հասուն օրիորդ:

— Ունեմ, երկուսը, — պատասխանեցի ես:

— Նրանք քեզ համար գուլբաներ գործում ե՞ն, քո ոտքերը մաժո՞ւմ են քնելու ժամանակ:

— Ո՛չ, նրանք ծոյլ են:

— Եւ դու նրանց չե՞ս ծեծում:

Մէկը ուրիշը հարցնում էր.